

«ԲԱԶՄԱՎԵՊ»ԻՆ ՄԵԿ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ

—♦—♦—♦—♦—♦—

Այս անգամ այս այս վերնագրովս է որ Հայրենիքին (թ. 4060) միտքը կ'իյնայ — զրեթէ զրեթէ կը հաճի — շնորհ մը կ'ընէ — Միխթարեաններւուն վրայ բան մը ծրելու : Յօդուածըր — որ սովորական չէ, երբ մեր վրայ կը գրէ — ստորազիր շաւնի . բայց, գրողը, իր օրագրական արուեստով և շեշտովը, կը ջանայ շնչել իրեն վրայօք հինգածի հով մը, կարծես, ըստմ, անհոգութիւն մը՝ որ կ'ուզէ պարտկել արհամարտութեան մը անցնելու վրայ եղած կէտը. կը զզայ — կ'երենայ — թէ զործը, միշտ, « անմեղ վանականին » մը հետ է . շատ այնշափ խզմըտութիւն, ետք առաջ մտածել պէտք չէ . արդէն, իրենք, — մորքէն կ'ըսէ ։ երբեք չեն պատահանած, ուղղափէ. եթէ քիչ մ'ալ բան առելի ըստնք, քովերնիս կը մնայ, (ինչպէս շատ անգամ մնացած է) : Եւ իսկոյն կը սկսի.

Ա թագմավէպին այս տարուան յունուարի թիւը կը պարունակէ առաջին յօդուած մը — կամ թէ կ'ուզէք քսենց խմբագրական մը — որ... » : Այս նախերգն է՝ այն տեսակ մը երաժշաւութեան՝ որով կարծես թէ արդէն վաղուց ծափերու, յաղթանակներու վարժած վարպետը կ'առնու շարժել իր գաւազանիկը, գաւազանիկ մը՝ որ երրեք չէ հանդիպած սուշելու շշիւնին : « Պայքարէ փախող չենք — կ'ըսէ ինքը —, բաւական է որ մեր հակառակորդները (մեծ պատիւ է մեզի) ըլլան... քաշաքալար» : Պայմանը այս է, վայելուշ և հանդիսական. ուստի զիխարկնիս հանենք, զգեստներնուա զրօշակները (չհասկուի զրօշը : որ իսորթ է) վրայէ վրայ բերենք, ամփոփուինք — անժպիս — Հայրենիքին պատասխան տալու համար : Նախատինք պէտք չէ ընել, բնաւ : Նայինք :

« Կղզիացեալ անմեղ վանականի մը ուղ-

դամիտ ըլլալն և ալ, այս մեր՝ իբրև բաղմամբոխ հրապարակի մը մէջ աթոռի մը վրայ կանգնած՝ մեղաւոր աշխարհականին զիխաւոր պատուէրը, խղճահարութիւնն է, որ, վայրինեան մը աշքերնիս վար առնուզ (աղիսաւորոյզ է, այլ առնել), մտածել կուտայ : Հս' է արդեօք յիշելու բուն տեղը. Զկայ յանապատի որ կայ յաշխարհի : Եւ... տառջ տանիքնը — միշտ զդուշանալով նախատինքէ — : Վինադրատութիւնն մը իսկ անօդուա աշխատանք պիտի համարուէր (sic!) եթէ... » ։ մէկ խօսքով — քանի մը կետեր, իրենց այն « թշնամանքովլը » , չի գրուէին թէ զպայսն լիղեր ունինք, շմանցընէին թէ . Ռ' կ'ըլլայ կօր այն և անմեղ վանականը » որ և միամուարավ ո մեր ո Զալայի մը վրայ ժափ խօսելու . և այն : Եւ հոսքաւագանիկը թափ մը ունի, խոյանք մը, կարծես թէ ինտեռէզզօխն վրայ է . մտիկը ըլլէք : « Վեներտիկի Միխթարեաններն ալ անա կ'ուզէն մասնակցիլ (վերջապէս) մեր ժամանակակից կեանքին, կ'անդրագառնան (երկու հարիւր տարի մրափելէն եսպը) թէ 49րդ գարուն վերջերը Հայերը կը վարեն հանրային կեանք մը որուն առաջնորդը Եւստիուր կամ ֆաւատոսը չեն կրնար ըլլալ » : Ե՞ն, առաջ տար, սորիելու բան կայ : « Կը նկատեն թէ ալ կը բաւէ իրենց համար հեռու հեռու (bîs) ապրիլ ժամանակակից կեանքէն » : Ուրիշ՝ դեռ կայ :

Բայց այս բացարարութիւններդ, սիրելի Հայրենիք, աշուում հացի մը պէս հին է, գուցէ ծթառձ ալ. այն օրէն որ սկսար նոր տնօրէնի մը տակ իրեւ առօյզ ուժով մը և եռանկեամբ հրատարակուիլ, այսպիսի իմաստաներով — քիչ մը վեր, քիչ մը վար — հարիւր անգամ զմեղ մնացար, և նոյնշափ անգամ նորէն ողջունեցիր. մեռուցիր զմեղ

ու դարձեալ մեզի յարութիւն տուիր քու ան-
հուն բարութեամբ։ Եւ այսպէս, ասիպաւած
ենք մենց, խեղն որուականի մը նման, եր-
բեմ գերեզման մշակելու անգութ բռնցի մը
հարուածով, և երբեմ ալ գծուո ձեռքի մը
կարկառմամբ մեր կափարչը թօթափելու,
զուրս ելլելու, արևուն լցուը վայլելու հա-
մար, Եթէ տանջանք մ'ըլլար այս, ասկէ
աւել տանջանք չեր կրնար ըլլալ։ Բայց
դառնանք յօդուածագրին, որ զեռ շատ բան
կ'ըսէ։

« Թշնամնքէն չենք վախեր, մեզի եր-
կիզ պատճառողը անտարբերութիւնն է որ
կը սառեցնէ մանուան ցրութեամբ»։ Մա-
նահանգ այս տարի որ ցուրան անտանելի
էր, և թերեւ Հայրենիք իր անբաւ գորո-
վովը, կարծելով թէ Միհիթարեաններուն ու-
նեցած անտաները սպառած ըլլան, կու զայ
իր ճանանչաւու ճառագայթը սփուելու անոնց
բոլորտիքը պատած ձիւնին վրայ։ Եւ ասկայն
ցուրաը կը շարունակի։ Եւ կ'աւելցնէ։ « Ու-
րեմն կրնանք Վենետիկի Միհիթարեանց
(թանձրէ . . . եաններուն) պաշտօնական թեր-
թին այդ յօդասձը համարիլ առաջին քայլ
մը մասնակցելու մեր ապրած կեանքին ու
թարեկենդանը թէպէտ լմնցաւ — գէթ մեզի
համար՝ — բայց հոս կրնայ հարցուիլ՝ թէ ար-
գեք յօդասձագիրը իրեն գրասեղանին վրայ
է, թէ թատերական բեմի մը, ուր, բոպէի
մը համար, զգեստաւորուած, կ'ուզէ ձեւցնել
նախագահի մը զերը, հին դպրոցի մը մե-
ծամեծ շարժմներներովը, առողանութեամբը։
Եւ մեր այս հարցմանը իրեւ պատասխան,
կարծես կը բարձրանայ վեր երկրորդ հան-
գէսի մը լիրագոյրը, լսեցնելու մեզի այս
հետեւալ շոշականըն ալ։ և Անշոշը մեր
մարէն շանցնիր որ վանական միաբանու-
թիւն մը կրնայ գրական, իմաստափրական,
գեղարուեստական (զիտականը միայն չիշե-
լու ամօթիսածութիւնը անեցեր է), հանրային
կեանքին ցոլացումը եղող ամէն խնդիրներու
մէջ հանաձայն գտնուիլ միշտ առաջ երթալու
հետամտող մասմակին հետ ա, կեցիր, մի՛ ար-
տորար, մի՛ զարգափեր, երկակայութիւնը
շախատի, զեռ նոր սկսաւ սուրալ հեծելա-
նիւը կ. Պոլսի փողոցներուն մէջ։ Շւրջ կող-

մանէ պէտք է զիտնալ միայն — և գործը
հնն է — թէ այն մեծամեծ ականենքուն
հայլին, ոսպնաձև ապակին, (չեմ զիտեր թէ
յօդուածագիրս բնաբանութենէ կը հասկնայ)՝
որ կը ցոլացնէ, իրմէ արեւու ճառագայթնե-
րէ, հանրային կեանք մը, միշտ առաջ եր-
րաշու հետամտող մամուշին միջոցով, բացա-
հայեաց է արգեօր, թէ մերձանայեաց. ա-
պա թէ ոչ ինտիրը կը փոխափ, և վաևա-
կան միաբանութիւնն մը չի կրնար համաձայն
գտնուիլ հոն՝ ուր ամէն բան կամ խոշորա-
ցոյցով կը տեսնուի կամ հակառակ շրջած։

Եւ հայեր որ Եւսերիսոսի մը վրայ կը
քրքջան և ֆաւասս մը, զիտացած զիտացած,
կը ճմարլիկին. այն հայերը, կ'ըսեմ, որ
առան անպամ վկի. Սարառւն իրենց բերան-
ներնան մէջ ծամծմելով, վիկոր Հմայի
եղունգներուն վրայ ապշտ, Մորասան մը
անութներնուն տակ, ինչակտ Զօլան, իրմէ
Պրիապոսի պատկիր մը, մագերնուն մէջ,
փոանկական հնակապ հնեղինակներու, հեղե-
ղով մը, Մոլիերի, Պալզապի, Ալեք. Տիւ-
մայի, Ցոտէի, Լիթրէի, և այլն, կու զան
զիմանցնիս — Պետէ յօւրուի մը տեղոյն լու-
սաստուերներու, կայծերու տակ — զրագի-
տութիւն մը, իմաստափրութիւնն մը, գեղա-
րուեստ մը մեզ սաեղծած ըլլալու յաւակնա-
թեամբ, մեզի որիշ բան չեն չնչեր, չեն
ցուցներ — ըսկնեց քաղաքավարութիւննիս ալ,
անցարագավարութիւննիս ալ վտանգի մէջ
դնելով — բայց եթէ հրապարակի ապարթանք
մը, շաղակառատանք մը և զորս ինկած եր-
կայնաշափ լեզու մը միայն։ Եւ յետոյ,
մեր լսանելուն հոզ կը տանին, կ'ողեն,
կը բանազտեն, կը զրուեն որ իրենց պա-
տափառանենք. ի՞նչ բանին, իրենց պատա-
խանելը հոն այն ֆաւասով քիթուալոյը ըն-
քուցներնուն վրայ — կ'ազագակմ օրդափ որ
ձայն ունիմ — մեզ մահացուում մըն է և
ծաղալարժիք մը հետ իրմէ խօսիլ մը։ Մեր
հին ազգային հնեղինակներուն վրայ կրնան
երթալ միայն ուրիշ գժրադիդի մը հետ կա-
տակիւու, կարաւելու, եթէ կ'ուզեն, բայց
մեզի հետ չէ, որ ֆաւասով թղթատած ժա-
մանակնիս ալ — բած ըլլամ միանգամ —
չենք մոտցած նաև վկիտոր Հիւկոները, և

մեր վիճակին, մեր պատույն առաջնորդող ընտրութեամբը — եթէ կը հածիս ըսէ, պարոն յօդուածազիր, վանականի մը անմեղութեամբը — զիրենց յարգեր ենք, Մենց, այս՝ կը կենանք լուս հեգութեան մ'աղյև, որ ըրածը և ըստոր չպիտեր, և անձուկ մոքէ մը յառաջ եկած ծագրածու տղիտութիւն մը բառնի տեղ դնելու ոչ ցաւը, ոչ կամքը, ոչ համոզումը անհետած ենց երրեք և պիտի ունենանց։ Եւ... կը սպառնամ (մի ծիծաղիք), այս նիւթիս վրայ հիմակուհիմայ այսշափ։

* *

Հայրենիքի յօդուածազրէն այն վերը յիշատակուած հատածները՝ կը կազմեն, զրեթէ, իրեն ճիշդ երեք սիւնակներուն իրրե յառաջաբանը, և... կարեսրազոյն մասը. վերջէն անմիջապէս եկածը՝ իրեն նիւթ առած խմբագրականին աշխարհաբարին վրայ սուրիշ բան չէ բայց քանի մը ականջի փափկութիւն, խորթութիւն, իմաստակ զիտոզութիւն. և կը ցուցընէ հոն, կը պարզէ, փունկական ակագեմականի մը կատաղութեանը և խտալական փուռապայի մը մէջ արտեստակեալ յատակարան մ'ըլլայու գերգօնութիւնը։

Ինքը, ընդհանրապէս, այն խմբագրականին աշխարհաբարը չի հասկնար, կամ « աշխագին (սարսափելի) » նեղութիւն կը կրէ հասկընալու ». տակայն, կաղալոյ, խարխափելով, կը շանայ անոր վրայ խորհրդածութիւններ ստեղծել, էջեր լեցնել — իրրե ատեն անցընելու համար և կը ցննապատէ, քիշ շատ, ինչ որ « թշնամանք » է, ինչ որ « տմբաստանութիւն » է Եւ հոն, այն կէտին, puritainի մը կեցուածքովը, եղնկապաշտ գրաբարեանէ մը աւելի մոլի, կը սպառնայ ըլլալու նոր արփիխափայ Մեսրոպը աշխարհաբարի ոսկեդարու մը, որուն արշալոյսը (Հնորհակալ ենց) կը նշմարէ և թագմապէկին գոյութեանը առաջին տարիներուն մէջ », և արժանի շնոր վիճը յետափիմական և դրվեստին »։ Այսեն կ'անցնի սակայն, թագմապէկին ոսկին կը փոխուի արժաթի, և կը փնտուի, խոշորացոյով, կը գանուի յակը երակ մը, կոտր մը, որ կապար անդամ չէ,

և ինքը՝ յօդուածազիրը — չար կամ. անուշագիր — աւելի անարդ մետաղ մը ներկայացը ներս համար հասարակաց, անոր մէջէն և շաղկապն ալ կը փրցնէ կը նետէ. « Անցեալ տարւոյ սոյն նկարազիրս՝ պատկերն է (և) քան զայն յատաջ բաւական տարիներու և խմբագրականին մէջէն հանուած այս նմացը — որուն նման խրթնութիւններ իրենին և իրենինեներուն մէջ ալ կը նան սպրզիլ, զրտնուիլ — բաւական չէ. անմիջապէս ետքը կ'արտասպէտ ուրիշ մ'ալ, որ արժանի չէ բնաշ հասկցուելու կամ խորթ ըլլալու խըժքիթին. միայն քիչ մը սեղմ է, և, սպորաբար ճապազ, թեթեւ — սիրուն, եթէ կ'ուզէ — ունով գրելու վարժած միաց մը կը յագնեցնէ, կը շփմբէ։

Կը խոստովանինք թէ « մի ո և վերայ ազբելուս մէջ ». « յառաջալիմական » չենք. բայց մենց չենք միայն գործածողները, այսպիսի « զրպարտութեան » գէմ ուրիշ թերթի (Կ. Պոլսէ գուրս) խմբագրութիւններ ալ կը նան բողոքել. և — զարմանալի՞ բան — ինչ որ ցու քնըոյշ թմբուկիդ « խորթ հնչումներ » են, « մի » և « վերայ » զրպաներուն լսելիքին ալ « մը » և « վրայ » խմանուր կու գան. կարծիք, վարժութիւն, ականջի մը շնուռածքի տարբերութիւն. և ասով իրենք ցու որոտացող պատզամէ կը ջրեն և սուս կը հանեն։ Բնութեան մէջ չկայ բան որ մեռնի և արուեստը շկարենայ կենպանացնել զայն։ Ես, տես — քեզմէ աւելի ժամանակիցից — « մի » ին ալ, « մը » ին ալ « վերայ », « վրայ » կը ծիծաղիմ, բաւական է որ գաղափարս բացատրէ։

* *

Եետոյ կ'անցնի մեր խորամանէ յօդուածազիրը հարցնելու թէ « թագմապէս արդեօք ո՞ր կուսակցութեան կը պատկանի, կամ թէ ոչ մէկուն ու ինցնիրեն կուսակցութիւն մընէ (կուսակցութիւն մըն է) »։ Եթէ երկայն 53 տարիներէ ետքը չի հասկցաւ, հարցուողը այս երկիրի թթամութիւնը բժշկելու համար բնաւ զեղ մը չընի։ Սակայն անմիջապէս ետքը, ինքը, իրեն մարովը, հարցումը կը կարծէ լուծած ըլլալ. « թշագրութիւն ընե-

լովի իր ամբաստանութեանց (գրաբար կը հուտի... ութիւններուն, ծամանակակիցի քառարդեալ պահէ, ոսկեզարու մէջ քերականութեան սիսալ մի ըներ) կրնանք եղագացնել թէ սիրող մը ըլլայու և կղերամիս օրագրութեան որ իր ներկայացուցիչներն ունի. բայց ինչո՞ւ չի համարձակիր անոնց դրուամին ընել »: Զի համարձակիր, վասն զի հն, այն տեղ գրուած և կղերամիս » ածականին ոյժը չի հասկնար. այս զիսենք որ կարգ մը մարդիկներու համար անկրօնութեան և աղտեղութեան գէմ խօսդները և կղերամիս ո կ'ըլլան. և այս կարծիքը ունեցողի օրինակը նոյն իսկ Հայրենիքին յօդուածազիրը մեզ կրնայ տաղ:

Յետպ կ'ուզէ ժամանակակից կնաեցով ապրող մը որ իրեն « մատանանիշ ընենց այն թերթերը որոնք հրատարակած են... » և այլն Անոնց զեռ անցեալ տարուան գրութիւններ են. և ինքը որ գիտէ թէ « 19րդ դարուն վերջերը Հայերը (ի՞նչ) հանրային կեանք կը վարեն », զիտէ, և կը հարցնէ անոնց՝ զորանք ինքը զեռ նոր իրենց քունէն կ'արթընցնէ: Խնդրեմ ծաղրածութիւն չընենց. բաւական է միայն որ քուներնիս փափուցիք, զմեզ անհանգիստ ըրիք:

* *

« Վեց եօթը սիւնակ ամբաստանութեանց (...ութիւններուն, վերջինը ըլլայ, կ'ազդարարեմ) մէջ հաս մը միայն մեզի երկցաւ (ինչ որ է, շունչ առնուենք) քիչ մը յստակ. այն է Զոլայի համար եղած ակնտրութիւնը »: Ձեզի ո քիչ մը յստակ երկցաւ ո, պարզ անոր համար վասն զի կը փափագէիք ազոցանել սիւնակներնուդ մէջ այն փասնկան անսուանի մատենագիրներու անուններուն փոխ առած հմտութիւն մը, որ տեղը չէր: Բազմավէսիին խմբազականը անիէ առելի ճիշդ, անբոնազոս պարզութեամբ չէր կրնար զուրցել այն երկու խօսքը — որ շատերու բերանն է — Զոլայի համար. և իրեն « պատուաւոր մեմարանք խորշեցան իրենց ձեռքը կարկանել՝ իրեւ ընկերի » բառածը, պարզ եղելութիւն մ'է, պատմութիւն մ'է որ կ'աւանդէ, չոչ ուրիշ բան: բայց քննազատը

կ'ուզէ քաշըշել այն խօսքը, անոր միտք մը աւելի տալ, ծախելու քիչ մը գիտութիւն, քիչ մ'այ նախատինքի պէս բան մը — իրեւ առիթէն օգուտ քաղերով — սահեցնելու համար: և Քերաբուստական կեղունավայրի մը մէջ, հոն վենեսաիկ, ուր զեռ քանի մը օր առաջ այնքան խանդավաս (մասնական, մենց հոս էինց) ընդունելութիւն եղաւ հոյակապ վիպասանին, հայերէն թէրթ մը կ'ելլէ միամութար (սոսուզին հիանալի՛ ես քո այն միամըտարարներովզ, խորագիտութեանդ վրայ խոր կարծիք մը կը դրացնեն) կը յայտարարէ թէ երբ մատենագիր մը չի կրնար մտնել ֆրանսայի Ակադեմիային մէջ, այդ մերժումը ինքնիրեն նուաստացուցիչ բան մըն է »: Այսափ բան չէ ուզած ըսել հայերէն թէրթը. բայց մենք մեր կոզմանէ համարինք և ընդունինք թէ նուաստացուցիչ բան մը չէ. սակայն կայ անշոշշա Զոլայիդ վրայ իրտուիլակ մը, արատ մը, որ Փաննկից Ակադեմիային խիրճը կը վրդովէ, զուոք փակել կուտայ իրեն զէմ ամրապինդ, և միամութար հայերէն քերը մը կ'ելլէ կը յայտարարէ ու ֆրանսայի Ակադեմիային մերժում մը նուաստացուցիչ չէ: Զոլա մեծ ատանտ ունի, մեծ համբաւ (համցանք), չիս մէկը որ ուրանայ, և այս բան հասաւատելու համար, ոչ իմ աղազակիս պէտք կայ և ոչ Հայրենիքի յօդմածարքի մը. բայց հոչակին պատճառաւ չէ միայն որ վիպասանը խալից քաղաքներէն « խանզալաւու ընդունելութիւնը » զտու, այլ անոր մէջ կար նաև քաղաքական տեսակէս մը, նպաստակ մը, որ արգէն ամէն խտալիս իշած փունկ հոյակապ անձնաւորութիւն « խանզալաւու ո կ'ընդունի, Զոլայի համար առանձին նոր բան մը եղած չէ :

Ուրիշ կողմանէ, այն կատողած և դժբաղդ վիպասանին պէտքըը — Ակադեմիային մէջ մտնալու — հայերէն թէրթին այն բոլոր յիշած հեղինակներուն հանդիպածէն ասրբեր է. որմանք շեն մոնած եղեր, մէկը տառձին անգամ մերժուեր է եղեր, ուրիշ մը մէկ քուեով մնացեր է, երրորդ մը, մտնելով, քասարդէն ունեցող ընկեր մը քուին փափուցիք է. իսկ Զոլա, քանի՛ հետ փորձեց արգեօք, և այն՝ փողցես յարձակմամբ բռնա-

բարելու այն տաճարը. ո՞ւս խնդիրը հոս է, այս կէտին մէջ. մացածները բողոք աւելորդ խօսակցութիւն է:

Անանուն յօդուածագիրը — « զ է ար- գեօք — կ'անցնի ապա բացարութիւններ շույշելու, արգարացնելու Զոլայի եւ մզու- մը, իսրաւակումը Ակադեմիայէն. բացարուա- թիւններ, արգարացումներ, զորանը շատ դիւ- րոթեամբ վեր վար կրնայ ընել Ակադեմիան և ո՛ր և իցէ փուանկ մը. հայու մը համար այսափ տակնույթոյ ըլլալու պէտք չկայ և աւելորդ աշ է: Բայց բանիկ մը մենք ալ ըսենք, կամ, պատիկ զիտութիւններով կո- չենք իրեն ըստածները» և Ակադեմիային մէջ երկրորդական և երրորդական գրազներ կան և եղեր: Հու, հետևեանք: « Զոլա եթէ կ'ուզէ Ակադեմիային մասնակցիլ, ո՛չ թէ իր փառ- քին վրայ բան մը աւելցնելու համար է, այլ որովհետեւ. Ակադեմիան պաշտօնական մարտին մը կը համարուի և Զոլա կ'ուզէ որ իր գրա- կան զպրոցն ալ պաշտօնապէս մոնէ անոր մէջ »: Շատ փափուկ զուրցուածներ են ա- սոնք, որոնց մէջ մեր խոշոր միտքերը չեն կրնար թափանցել, Զոլային պատիքը ապ- րեցնելու ելք մը գոնալ, և մերկանալ Ա- կադեմիային դրանը բան զաղանիքը, զոր յօդուածագիրը կը զգոշանայ յայսնելու, իր- րն մատնիչ մը ըլլալու վախէն: Առաջ տա- նինք: « Ո՞չ ապաքէն (կարծեմ զդուշանալի է, չի հասկցուիր, առանց իմանալու գրաբար կը զիւս, երբեմն. Ուկերեանի ամէնէն զեղեցիկ ճառերը Ո՞չ ապաքէնալ կը սկսին) Զոլա և Պատույշ Էջէկոնի ո պատուանշանը ընդունեցաւ» որպէս զի իր զպրոցին պաշտօ- նական հանգամանք մը ապ ո: Ընդունեցաւ ի՞նչ ըսել է, պատիք ըստ իրեն հայրե- նեացը. և այն պատուանշանը որ կը տրուի, « զպրոցի մը պաշտօնական հանգամանք մը տայլու » համար է: Նո՞ր բան: Վէրսի՞ ո- րուն արուեցաւ նոյն նշանը, իրեն ո՞ր դրպ- րոցին պաշտօնական հանգամանք մը տառաւ: Կը շնորհուի միայն հանճարոյ, հոչակաւոր մասնագիր, արուեստագէտի, և այլն, ուրիշ հայեացներով, ուրիշ ձներու տակ, շնձեռու Փոնակիա իր այն պատուանշանը:

Եւ Ակադեմիան շընդունիր Զոլա մը,

պարզ այն պատճառուաւ — նրբութիւններու զիմելու պէտք չկայ — որ Cochonnerieներ ունի: Ընդունուելով կրնայ զորս փախցնել, եթէ Տիրաննուաւ մը բան մը չէ աշքից, Փասթէօն՝ մը. Փասթէօն մը՝ որ և կղերա- միտ » չէ (մեղայ մեղայ), և ի՞նչ է և շատ լաւ պէտք է զիտնաս զու: Cochonnerie գցականը — ինչ որ միտքս կու գայ — եթէ փիայիմ, հաճէիր ուզզելու — այս անսւանի թիշկը նետներ է մէջտեղ Զոլայի գրուածնե- րուն համար, և ի՞նչ առթիւ, զու պէտք չես անզիսանալ: կրնանք արգեօք կրիկնել, հոս, այն քու հուետուրական ոճովդ, Ո՛ւր Փաս- թէօն, ո՛ւր Նանայի վիպասանը:

Բայց, duleis in fundo, այս զոլայական շատագովականին վերջին երգը, վերջին վան- կը, սատրզի գառնացած ոգոյք մը հեծանին է, սիր հանելու իրբն յիշոց մը. նետուած մը որ իրեն նիւթը, իրեն պաշտպանածը, բաւականապէտ չկարենալ արգարացնելէն յա- աջ կուզայ. և բոլորովին զգնը թափած, կ'ըսէ. « Ու երր Միխիթարեանց (") գրքե- րուն ցացակը աշքէ անցընենք (ցացակը, ժիմյն), ի՞նչքան հատորներ սրոնց հրատա- րակութեանը ո՛չ պէտք կար, ո՛չ ալ փափաք (քեզի համար. Եւսերիսու, Փաւատոս ալ մէջն են): Այդ գիրքերն ալ իրենց սուտամիտա, նախապաշտեալ պարունակութեամբը և կաս- կածելի և ոչ բարեհամբաւ հեղինակաց » զործ սեպուելու ամէն թերութիւններն ու- նին »: Հու, Զոլայի վեպերը Միխիթարեանց զբքերուն հետ կը բազգատուին. ի՞նչ յար- մարութիւն կայ. խելքս չի հասնիր: Ես, ա- ռանց հպարտութեան, Ո. Սահակէն մինչեւ Բազրատասնի, Դաւիթ Անյաղթին ալ զուրս չձգելով, կրնամ ըսել թէ կը հասկնամ ինչ որ զրուած է զրաբար. և այն օրէն որ սկսեր է զրուածուիլ աշխարհիկ լեզուն թուղթերու վրայ, մինչեւ այս Հայրենիքին հոշակաւոր յօդուածը՝ իմանալու, ինչլամնելու կարողութիւնը ունե- ցած եմ: Բայց հոս, այս քանի մը տողե- րուն վիմաց, չեմ զիտեր ինչպէս, միտքս կը ստուերանայ, կը թանձրանայ, կը բլազինի, և կը զգամ որ այս աշխարհաբարը, այս վեր- ջին՝ իրբն այրած սրտէ բղիսած՝ բրուխնը, չեմ հասկնար: Միխայն կ'երկնայ ինձ, վեր-

իլերոյ, — հեռաւոր ժամանակի մը յիշա-
տակները երազելով —, թէ զպրոցի մը մէջ
եղած ըլլամ, և ընկերներէս մէկը որ զիս
կը ներդէք, անոր ըսած ըլլամ. Դրում զուխ,
և նա ալ ինձ պատասխանած ըլլայ. Դրում
զուխ դու ես :

* *

Ամէնէն վերջը, մեր քննադատը կը թըղ-
թառէ բազմավկար, և կը տպէ հօն յօդուած
մը « Թուարանութեան վրայ » որ չկայ : Կը
ներէ, — և պէտք է ներէ — որ ոչ միայն
բազմավկարին աշխարհաբարը չի հասկնար,
այս կը բժոտի, մթարքներ կը շողան աշքին
նաև այս խեղն չանդէսին տառերը կարենալ
կարդալու : « Թուարանութեան » յօդուածը,
պէտք է ընթեռնուլ « Բուարառութեան » :
թէպէտ, ինքը, կրնայ երկուքին ալ կարեռ-
րութին չսալ, աւերը վեր վերցնելով : Աս-
է, ան եղեր է : « Այդ ամէնը, որոնց մէջ
շատ խորին հմտութիւն կը պարունակէ պարո-

կերէն բառերու վրայ զրուածը, կրնան ու-
կայն ո՛ և է որոշ ուղղութեան մը ծառայել
ու մեր մորքին կամ սրախն վրայ ներգոր-
ծել »: Ըսածդ շատ իրաւացի է, բայց այն
« պարսկերէն բառերը » արդէն, ձեզի հա-
մար զրուած չեն : իսկ այս ամէն բանը որ
կրնայ « ներգործել ձեր մորքին կամ սրախն
վրայ », կը յուսամ թէ չէք պահանջեր որ
գրեն իրենց թերթին մէջ « մաքրակենցաղ որ
կրնաւորներ »:

Եւ կը լմննէ : « Ապասենք որ քննադա-
տող թերթը զգրծնական օրինակով ցոյց տայ
այն ճամբան որմէ կ'ուզէ որ երթան հայ ո-
րագործները ու Լրջարար կ'ըսեն . քու ամ-
բողջ համոզմանդ կարողութիւնը ունի՞ս այս
խօսքիդ մէջ, թէ ... Այն ատեն, խնարհաբար
կ'ըսեմ . կրնաք սպասեք :

Բազմավկարին առաջնորդող յօդուածին վը-
րայ, կը ներկայանայ այս իրրե վերջունողը
(ընազրէն դուրս) :

Այրեք .

ԱՌ ԼԱԼԱՅԵԱՆՑ

...><...><...

Խըրաբանվիր եղանակ
Ումի իւր երգ ու թըղչակ .
Գարման երգէ սոխակիկ,
Ամստմ նըմնջյս նըռուողիկ:
Տանեաց վըրայ կամ ծխանի
Պը շինեն խեղն բոյմ յարդի,
Կամ վազվորեմ մէջ օղիմ՝
Գեղգեղելով իւրեղագիմ:
Այլ ծամեռմ ալ երը կը գայ,
Երգիմներմ հետ կ'ութեմայ,
Որ դէս ու դէմ երգերով
Ապրիմ ամիոգ՝ ամվըրդով:

Թատրոնի մէջ տպմ ժնուեր,
Հազած պոշով պինակեր .
Կիմ հովահար կը ըըռմէ,
Այլ ողուամարդք մի բէռնէ .
Սոխակիմ պէս թըրամք եւս
Ումիթ զոյգ ուրք, այլ ոչ թեւս.
Բոյմ էլ ումիթ, սակայն լոկ
Սիրոյ բոյմ է հրաբորքոք:
Այդ թըռչմոց միթ ես նամիւմամ,
Ինձ մօտիկ է, բարեկամ .
Նա սոխակ չէ թեւ ցումի,
Լալայեամ գողտը ծայմ ումի .

Պ. Հ. Արքայուն .